ՀՀ Արագածոտնի մարզպետարանի
գենդերային հարցերով զբաղվող
մարզային հանձնաժողովի
նիստի 30.08.2017թ.

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ո

30.08.2017թ. տեղի ունեցավ գենդերային հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի նիստ՝ **հանձնաժողովի նախագահ, մարզպետի տեղակալ Ն. Մովսիսյանի ղեկավարությամբ:**

Մասնակցում էին հանձնաժողովի անդամներ՝

Ն.Մովսիսյան-ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ, հանձնաժողովի նախագահ

Գ.Դանիելյան-մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ, հանձնաժողովի քարտուղար

Ս.Թադևոսյան- մարզպետարանի աշխատակազմի առողջապահության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ

Ս.Հովսեփյան-մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման,հանրապետական և գործադիր մարմինների հարցերով վարչության պետ, հանձնաժողովի անդամ

Գ.Աբրահամյան-Ապարանի քաղաքապետ, հանձնաժողովի անդամ

Գ.Եղիազարյան-Աշտարակի քաղաքապետի տեղակալ, հանձնաժողովի անդամ

Ս.Արամյան-Թալինի քաղաքապետ, հանձնաժողովի անդամ

Մ.Աբգարյան-մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ, հանձնաժողովի անդամ

Ս.Զորյան- մարզպետարանի աշխատակազմի հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության բաժնի պետ

Լ.Մելքումյան--<<Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա>> ՀԿ Աշտարակի մասնաճյուղ,հանձնաժողովի անդամ

Ս.Բարնջյան-<<Հայ օգնության միություն>> կազմակերպության Աշտարակի մասնաճյուղ, հանձնաժողովի անդամ:

Հանձնաժողովի անդամներից հարգելի պատճառով բացակայում էին Ն.Դավթյանը /ԸԿԵԻՊ բաժնի գլխավոր մասնագետ/, Թ. Շահվերդյանը /Աշտարակի քաղաքապետ/:
Նիստին մասնակցում էին ''Վորլդ Վիժն Հայաստանյան'' միջազգային կազմակերպության Արագածոտնի մարզային զարգացման ծրագրի ղեկավար Թամարա Բարբակաձեն, առողջապահության ոլորտի պատասխանատու Ռուզաննա Մանուկյանը:

Հանձնաժողովի նիստին ներկա էր և ողջույնի խոսքով հանդես **եկավ ՀՀ Արագածոտնի մարզպետ պարոն Աշոտ Սիմոնյանը:** Նա կարևորեց կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման ուղղությամբ ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության որոշմամբ ամրագրված դրույթների կատարման նպատակով մարզային հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի, ոլորտային միջոցառումների կատարման նպատակով մարզպետարանի աշխատակազմի և տեղական ինքնակառավարման մարմինների դերը, ընդգծեց իր պատրաստակամությունն այդ ուղղությամբ տարվող աշխատանքների արդյունավետության բարձրացման համար:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ, մարզպետարանի գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի նախագահ Ն.Մովսիսյանը: Նա ներկայացրեց հանձնաժողովի նախորդ նիստի հանձնարարականների կատարման արդյունքների մասին: Նշվեց, որ ՏԻՄ ընտրություններից հետո մարզի համայքներում ավելացել են կին ավագանու անդամները 16-ով՝ 33-ը դարձել է 49-ը:Ն. Մովսիսյանը անդրադարձավ ''Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին'' ՀՀ օրենքի պահանջներին՝ կապված գենդերային խտրականության սահմանմանը, գենդերային հավասարության երաշխիքների ապահովմ,ան խնդիրներին:
Հաստատվեց օրակարգը:

Օրակարգ

1. ՀՀ Արագածոտնի մարզում կանանց վերարտադրողական առողջության պահպանման ուղղությամբ 2016-2017թթ. /1-ին կիսամյակ/ կատարված աշխատանքների մասին և մարզի ՔԿԱԳ ծառայություններում ըստ ամիսների գրանցված նորածինների թվի համեմատությունը մարզի բժշկական հաստատություններում հաշվառված հղի կանանց թվի և ծնունդների հետ:

Զեկուցող՝ ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության բաժնի պետ Սիլվա Թադևոսյան
/Կից՝ զեկույցի տեքստը/:
Տ-ին Թադևոսյանը ներկայացրեց կանանց վերարտադրողական առողջության բարելավման ուղղությամբ իրականացրած աշխատանքները: Ներկայացրեց ծնունդների թիվը՝ ըստ մարզի տարածաշրջանների և ՔԿԱԳ մարմիններում նորածինների գրանցման: Նշվեց մարզի բժշկական կառույցներում հղի կանանց վաղ հայտնաբերման, հաշվառման և ծծնդօգնության կազմակերպման ոլորտում առկա խնդիրները
/գինեկոլոգ վիրաբույժների պակաս, հղի կանանց գերակշռող մասը հաշվառվում է մարզից դուրս այլ բժշկական կառուցներում՝ շենքային սանիտարահիգիենիկ պայմանների, բժշկական տեխնիկական հագեցվածության պակասի պատճառով/:

2. ՀՀ Արագածոտնի մարզում մայրության դպրոցների գործունեության մասին:

Զեկուցող՝ ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Գայանե Դանիելյան /Կից՝ զեկույցի տեքստը/:
Մայրության դպրոցների կազմակերպման համար միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից վերանորոգվել և գույքային ու տեխնիկական միջոցներ են տրամադրվել:Պետական չափորոշիչով նախատեսված 5 դասընթացները միշտ չէ, որ անցկացվում են խմբային պարապմունքների ձևով, չեն տրամադրվում անհրաժեշտ մեթոդական նյութեր:

3. Վորլդ Վիժն միջազգային կազմակերպության Հայաստանյան գրասենյակի Արագածոտնի մարզի զարգացման ծրագրերի շրջանակներում հղի կանանց և մայրերի հետ տարվող աշխատանքների մասին

   Զեկուցող՝ Վորլդ Վիժն միջազգային կազմակերպության Հայաստանյան գրասենյակի Արագածոտնի մարզի զարգացման ծրագրերի ղեկավար տիկին Թամարա Բարբակաձե

   Նա նշեց, որ Թալինի և Ապարանի տարածաշրջանների համայնքների բժշկական կենտրոններում իրենց աջակցությամբ պարբերաբար կազմակերպվում են մայրերի և հղիների համար առողջության պահպանման, մինչև 3 տարեկան երեխաների ճիշտ սնուցման, խնամքի և ծնողավարության հմտությունների զարգացման վերաբերյալ դասընթացներ: Մարզում նրանց կողմից իրականացվում է <<Հոգատարություն՝ հանուն հավասարության>> գենդերային ծրագիրը, որի շրջանակներում աշխատանքներ են տարվում պտղի

սեռի արհեստական ընդհատումները կանխելու, երիտասարդ ընտանիքների հետ կազմակերպվում դասընթացներ:
Յուրաքանչյուր տարի երկու անգամ մարզի առողջապահության ոլորտի մասնագետների համար կազմակերպվում են 2 ֆորումներ, նրանց ցուցաբերվում են մասնագիտական և տեխնիկական աջակցություն:
Հղի կանանց և մայրերի ուսուցման համար՝ հիմք ընդունելով ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված պետական չափորոշիչները, պատրաստվել են մայրության դպրոցի հինգ դասընթացների մասին մեթոդական ուղեցույց՝ սկավառակների տեսքով:

Նիստի ընթացքում քննարկվեցին հարցեր, որոնք վերաբերում էին մարզի համայքներում Մայրության դպրոցների արդյունավետ աշխատանքների կազմակերպմանը, ինչն էլ նպատակ ունի հղի կանանց՝ իրենց կարգավիճակին իրազեկելու և ադապտացնելու, նաև մարզային բժշկական կենտրոններում դասընթացների անցկացումը կազմակերպելու մարզային բժշկական կենտրոնների մանկաբարձ գինեկոլոգների կողմից: Հանձնաժողովի անդամները նշեցին Մայրության դպրոցի կարևորությունը կնոջ և երեխայի առողջության պահպանման, տղամարդու և կնոջ, տան մյուս անդամների հետ առողջ փոխհարաբերությունների հաստատման գործում: Նշվեց նաև մասնակիցներին բաժանելու համար առկա համապատասխան գրականության մասին:
Հանձնաժողովի աշխատանքներն ամփոփեց մարզպետի տեղակալ, հանձնաժողովի նախագահ տ-ն Ն. Մովսիսյանը:

Հանձնարարվեց՝

- Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության վարչությանը՝ անհրաժեշտ վերահսկողություն իրականացնել մայրության դպրոցների պարապմունքների անցկացմանը: Պարապմունքների առաջիկա գրաֆիկը ներկայացնել նաև մարզպետարանի գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովին, անհրաժեշտ աջակցություն ցուցաբերելու նպատակով:
- Մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնին՝ բաժնի մասնագետներին մասնակից դարձնել մարզի մայրության դպրոցների պարապմունքներին, աջակցել ՀՀ-ում գործող միջազգային կազմակերպությունների միջոցով

համապատասխան գրականության և էլեկտրոնային նյութերի ձեռք բերման և նրանց տրամադրման հարցում:

- Առաջարկել մարզի երեք քաղաքային համայնքների գենդերային հարցերով զբաղվող հանձնաժողովներին՝ եռամսյակը մեկ անգամ ուսումնասիրել ԲԿ-ներում գործող մայրության դպրոցների աշխատանքը, հնարավորության դեպքում անհրաժեշտ աջակցություն կազմակերպել, արդյունքների մասին տեղեկացնել մարզային հանձնաժողովին:
- Հանձնարարվեց հանձնաժողովի առաջիկա նիստում քննարկման նախապատրաստել՝ ա/ **հանձնաժողովի անդամ պ-ն Մ.Աբգարյանին՝** առաջիկա նիստում նախապատրաստել քննարկման ''Մարզի սովորողների և մանկավարժների շրջանում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների իրազեկվածության բարձրացման ապահովման մասին'' հարցը:
  բ/**հանձնաժողովի անդամ պ-ն Ս.Հովսեփյանին** ՝ նախապատրաստել ''Մարզի համայնքների ավագանիների կին անդամների գործունեության, կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների իրազեկվածության բարձրացման ապահովման ուղղությամբ կատարված աշխատանքների մասին'' հարց:

Հանձնաժողովի նախագահ՝ Ն. Մովսիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Դանիելյան